

ԼՈՐԵՆՍԻ ԳԱՂԱՓԱՐՆԵՐԸ ԿԵՆՍԱՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ*

Վիոլետա Հովհաննիսյան
Երևանի պետական համալսարան

Սույն հոդվածը նվիրված է Լորենսի՝ սիրային, ինտիմ հարաբերության վերաբերյալ ունեցած գաղափարներին, որոնք առաջին անգամ արտացոլվել են «Լեդի Չաթըրլիի սիրեկանը» (“Lady Chatterley’s Lover”, 1928) վեպում, իսկ հետագայում՝ իր փոքր արձակուրդը: Կենսահարաբերության տեսարաններում Լորենսը ցույց է տալիս տղամարդու և կնոջ նուրբ զգացմունքները: Այս հարաբերությունը հավասարակշռություն է պահպանում տիեզերքում կնոջ և տղամարդու միջև, և մարդիկ չպետք է ամաչեն դրանից:

Բանալի բառեր. կենսահարաբերություն, ինտիմ հարաբերություն, ֆիզիոլոգիական ցանկություն, կիրք, անբարոյականություն, կին-տղամարդ հարաբերություն, անգիտակցական:

Ներածություն

Լորենսի մտքերը կենսահարաբերության վերաբերյալ քննադատության են արժանացել և բազմաթիվ հարցեր առաջացրել ընթերցողների և, լայն առումով, հասարակության շրջանում: Նրանք ճիշտ չեն ըմբռնել Լորենսի գաղափարները՝ վատ հեղինակություն բերելով նրան: Լորենսն ինքը, չէր հասկանում, թե որն է պատճառը, որ հասարակությունը թշնամաբար է վերաբերվում իրեն: 1928 թ. «Լեդի Չաթըրլիի սիրեկանը» (“Lady Chatterley’s Lover”) վեպը տպագրվելուց հետո միայն նա սկսում է գիտակցել, որ «կենսահաղորդակցություն» բառը սխալ է ընկալվել ընթերցողների կողմից. «Այսպիսով, ես սկսեցի հասկանալ, թե որն է ինձ քննադատելու պատճառը: Նրանք միայն ինտիմ հարաբերության մի ձև են ճանաչում, որը պարտականություն է, երբեմն նյարդային, այսպես կոչված՝ «սպիտակ հարաբերություն»: Ես միանգամայն համամիտ եմ, որ այս տեսակ ինտիմ հարաբերությունը կեղծ է» (Լորենս 1979:348):

Կենսահարաբերությունը՝ որպես նուրբ զգացմունքներ արտահայտելու միջոց

«Լեդի Չաթըրլիի սիրեկանը» վեպը կարելի է ոչ միայն ընկալել որպես Լորենսի ամենաքննարկվող վեպ, այլև այն հրաշալի հիմք է տալիս մեզ հասկանալու, որ գրողի հիմնական նպատակը այս վեպում, իսկ հետագայում արդեն իր փոքր արձակուրդը, տղամարդու և կնոջ բարդ փոխհարաբերությունները լուսաբանելն է. «Տղամարդիկ Կոնիի մեջ անչափ գնահատում էին ՄԱՐԴՈՒՄ և բավական դաժան էին կնոջ հանդեպ, արհամարհում կամ ընդհանրապես անտեսում էին նրան»: (Լորենս 2014:194): Այս վեպի մեկ այլ դրվագում Լորենսը նկարագրում է կենսահարաբերությունը՝ որպես մեղիտացիայի գործընթաց, երբ հոգին, ասես, դուրս է գալիս մարմնից. «Կոնին դեռևս պարզված էր անշարժ, ասես քնի մեջ, անմասն ու անհաղորդ» (Լորենս 2014:194):

* Հոդվածն ընդունվել է տպագրության 14.01.2017:

Այս վեպն ավելի շատ բացահայտում է այն նուրբ զգացմունքները, որոնք թաքնված են մարդու մեջ: Դրանում քննարկվում են կենսահարաբերության կապերը երկու հասուն մարդկանց միջև՝ որպես բնական գործընթաց, որպես հաճույքի աղբյուր և ոչ թե անդթալի երևույթ: Ավելին, այն ներկայացնում է Լորենսի այն համոզմունքը, որ կենսահարաբերության կապն իր մեջ ներառում է սեր, ջերմ զգացմունքներ և հույզեր: Վեպի հերոսը՝ անտառապահը, Կոնիի մեջ կին է տեսել: Նա, բնությանն ավելի մոտ լինելով, անկաշկանդ է՝ արտահայտելու իր ցանկությունները, այս դեպքում՝ սիրելու ցանկությունը (Լորենս 2014:187): Այս առումով, Ալաստեի Նիրվենը նշում է, թե որքան յուրօրինակ վերնագիր էր ի սկզբանե ընտրված այս վեպի համար՝ “Tenderness” (քնքշանք), ինչը հստակ արտացոլում է Լորենսի մտադրությունն՝ ընդգծելու զգացմունքի և հավատարմության կարևորությունը կին-տղամարդ հարաբերություններում (Նիրվեն 1978:183):

Ինչպես նշում է Սթիվեն Մարկուսը, վիկտորիանական դարաշրջանի անգլիացի գրողների աշխատություններում կենսահարաբերության և պոռնոգրաֆիայի առկայության մասին իր ուսումնասիրության մեջ, «պոռնոգրաֆիան կենսահարաբերությունն է՝ առանց զգացմունքի, կրքի կամ սիրո» (Մարկուս 1964:238):

Լորենսը կարծում էր, որ կենսահարաբերվելու ցանկությունը երբեք անբարոյական չի կարող լինել, եթե այն բխում է սրտի խորքից: Նա վստահ էր, որ անբարոյականությունն այն է, երբ կանայք առանց սիրո և կրքի իրենց ողջ կյանքը նվիրում են անուսիններին: Նա զարմանում էր, թե արդյոք արժե՞, որ մարդը սահմանափակի իր ազատությունը, որպեսզի հասարակությունը նրան չքննադատի. «Քննադատել՝ առաջնորդվելով օրենքի տառով՝ անշնորհակալ և ձանձրալի բան է, առավել ևս, որ օրենքները չեն արտացոլում իրական կյանքը: Ասածս առնչվում է նրան, որ յուրաքանչյուր մարդու կյանքում պատահում է այնպիսի իրավիճակ, որ նա կամ պետք է մեծամասնության կողմն անցնի, կամ պետք է անտեսի նրանց կարծիքը և ապրի անկախ» (Լորենս 1936:170):

Այսպիսով, ի՞նչ է իրենից ներկայացնում ինտիմ հաղորդակցությունը կամ բիոհաղորդակցությունը: Այս մասին նա գրում է «Սեր» (“Love”, 1918), «Մենք միմյանց կարիքն ունենք» (“We need One Another”, 1930), «Ոչ մեկը ինձ չի սիրում» (“Nobody Loves Me”, 1930), «Նուճապի վիճակ» (“The State of Funk”, 1929), «Կենսահարաբերության կոչ» (“Sex Appeal”, 1928), «Լեդի Չաթլըրլիի սիրելեկանի վերաբերյալ» (“A Propos of Lady Chatterley’s Lover”, 1936) էսսեներում: Վերջին էսսեում նա շարադրում է. «Ես ինտիմ հարաբերություն բառակապակցությամբ նկատի ունեմ «արյան հաղորդակցություն»: Սա բոլորովին տարբերվում է ժամանակակից կենսահարաբերությունից, որը սառը, նյարդային երևույթ է: Սա անձնական կենսահարաբերություն է (personal sex)» (Լորենս 1936:352): Ապա նշում է, որ նման կենսահարաբերության մասին չէ, որ գրում է: Իսկապես, դա այն չէ, ինչ նա ցանկանում է պատկերել: Նա կենսահարաբերությունը պատկերում է որպես կիրք (warm blood-desire): Իր համար այս եզրույթը կյանքի հոմանիշն է, տղամարդու և կնոջ միջև նուրբ զգացմունքների արտահայտման միջոց: Այն տղամարդու և կնոջ միջև հարաբերությունների խորհրդանիշն է: Այն այնքան բնական է, որքան բնական են ֆիզիոլոգիական այլ կարիքները (Լորենս 1968:193):

«Կենսահարաբերության կոչ» էսսեում Լորենսը գրում է. «Ափսոս, որ կենսահարաբերությունն այսքան տգեղ բառ է: Որտեղ կյանք կա, այնտեղ էլ բիոհաղորդակցությունն է: Բիոհաղորդակցությունն ու գեղեցկությունը նույն իմաստն ունեն, ինչպես հուրն ու կրակը: Եթե ատում ես կենսահարաբերությունն, ուրեմն ատում

ես գեղեցիկը: Եթե սիրում ես ապրել, ապա կենսահարաբերության ցանկությունը մեծ կլինի: Մի ողջ աշխարհ գոյություն ունի, որը պետք է բացահայտել բնագոյնների միջոցով: Մարդիկ մերժում են բնագոյները՝ մերժելով գեղեցկությունն ու կենսահարաբերությունը (Լորենս 2004:144): Լորենսի խորին համոզմամբ՝ կենսահարաբերությունն, ամուսնությունը և մարդու ողջ կյանքը պետք է համահունչ լինեն տիեզերքի շրջանի հետ. «Կենսահարաբերությունը, – գրում է նա, – տղամարդու և կնոջ միջև հավասարակշռությունն է տիեզերքում» (Լորենս 1979:352):

Կենսահարաբերությունը՝ որպես մաքուր, ազնիվ ցանկություն

Լորենսը համոզված էր, որ կենսահարաբերությունը պետք է լինի մարդու առաջնային նպատակը և ոչ թե ամուսնական պարտավորություն: Այս հարաբերությունները հաճելի զգացողություններ են առաջացնում և, կարծես, տղամարդուն և կնոջը ծուլում են տիեզերքին: Մարդու գոյությունը կենսահարաբերության, դրա կարևորությունը գիտակցելու արդյունքն է: Ահա այսպես է նա վերգտնում իր «Ես»-ը և բավականություն ստանում իր անձից: Կենսահարաբերության գործընթացը բավականություն չի պատճառում ժամանակակից մարդկանց, քանի որ, ըստ Լորենսի, մարդու բնությունը այլասերվել է: Սա մշակութային խնդիր է, որի մասին նա գրում է իր էսսեում (Լորենս 1979:352): Ահա նույն կերպ ամուսնությունը հոգնեցրել է «Լեոյի Չաթըրլիի սիրեկանը» վեպի հերոսուհի Կոնիին, ում նյարդերի վրա ազդում էր իր ամուսինը, որն իր համար անզգացմունք, բանական էակ էր. «–Այո՛, – դանդաղ արտաբերեց Կոնին՝ մտածելով Քլիֆորդի մասին, որ կլանված լսում էր ռադիոյի զգացմունքային ապուշությունը: – Մարդիկ ծեղացնում են, իբր ապրումներ ունեն, իրականում ոչինչ էլ չեն զգում: Ենթադրում եմ, որ այդ ամենը պարզապես հնարանք է» (Լորենս 2014:219):

Ալան Վոթթսը բացատրում է, որ կենսահարաբերությունը գիտակցությունից, կամքից որոշ ժամանակ ազատվելու միջոց է (Վոթթս 1991:11): «Կենսահարաբերության ցանկությունն առաջանում է կրքից: Ոչ մի վատ բան չկա նրանում, ինչն առաջանում է ինքն իրեն» (Վոթթս 1991:188):

Լորենսը կիսում է սիրո և կենսահարաբերության արևելյան այս տեսակետը և հաճախ է հիշեցնում, որ սիրո նուրբ զգացմունքը գեղեցիկ է, քանի որ այն բխում է բնագոյներից և բնական երևույթ է: «Կենսահարաբերությունից, – գրում է նա, – չպետք է վախենալ: Դրանից չպետք է ամաչել: Դրանից պետք է բավականություն ստանալ» (Լորենս 1993:264): «Մաքուր» (pure) բառը Լորենսը հաճախ է գործածում կենսահարաբերության մասին գրելիս, քանի որ նա կարծում է, որ այդ հարաբերությունները պետք է ազատ լինեն ավանդական մտածողությունից և հիմնված լինեն մաքուր զգացմունքի վրա՝ մղելով անձնատուր լինելով բնագոյներին: Բնագոյ սիրո, կենսահարաբերության կամ ամուսնության ժամանակ «հոգու ազդակ» է (soul's impulse) և պետք է բավարարի մարմնի կարիքները: Ֆիզիոլոգիական այլ կարիքներից բացի Լորենսը մեծ կարևորություն է տալիս կենսահարաբերության կարիքին, քանի որ նա այն նկարագրում է՝ որպես «քաղց» (hunger) (Լորենս 1993:264):

Լորենսը գրում է Մորրիս Լ. Էրնեսթին՝ խրախուսելով ժամանակակից մարդկանց տրվել զգացմունքներին և կրքին ու զգալ ֆիզիոլոգիական շփման խորը ազդեցությունը մարդու ներաշխարհի վրա (Լորենս 1962:1099): Դրանք բնագոյային, ինքնաբուխ կյանքի անբաժանելի մասն են, իսկ ինքնաբուխ, բնագոյային կյանքը միակ ուղին է՝ զգալու տիեզերական առեղծվածը և հասնելու մարմնի ամբողջականության: Սա առողջ ցանկություն է, ի տարբերություն կոռուպցիայի,

քանի որ այն համահունչ ընթանում է բնագրային կյանքի հունով: «Լեդի Չաթըրլիի սիրեկանի վերաբերյալ» էսսեում Լորենսը գրում է. «Այս էսսեի հիմնական նպատակն այն է, որ տղամարդիկ և կանայք սկսեն մտածել կենսահարաբերության մասին՝ որպես մաքուր, ազնիվ ցանկություն, եթե նույնիսկ մենք չենք զբաղվում դրանով, որ բավականություն ստանանք (Լորենս 1979:330):

Չաման Նահալը պնդում է, որ ըստ Լորենսի կենսահարաբերությունը պետք է լինի միայն այն ժամանակ, երբ երկու կողմն էլ զգում են այդ ուժգին ցանկությունը: Նա զսպվածության և ոչ թե սանձարձակության կողմնակիցն էր (Նահալ 1971:110):

Անբարոյականության և կենսահարաբերության վերաբերյալ Լորենսը մանրամասնորեն գրում է «Պոռնոգրաֆիա և անբարոյականություն» («Pornography and Obscenity», 1936) էսսեում, որտեղ բացահայտվում է գրողի աշխարհայացքը: Ըստ Լորենսի՝ կինը պետք է կարողանա գրավել տղամարդու ուշադրությունը, հակառակ դեպքում՝ նրան միայն «չորացած ծուկ» կարելի է անվանել (Լորենս 1936:170): Լորենսը երբեք չի քննադատել այն կանանց, որոնք ազատորեն հարաբերություն են ունենում տղամարդկանց հետ: Նրա ժամանակակիցները դա անվանել են անբարոյականություն: Մինչդեռ նրա համար այդ անբարոյական կանայք ավելի բարոյական են և պարկեշտ (Լորենս 1936:170):

«Ես հիշում եմ, թե ինչպես մի ինչ-որ հողվածում անբարոյականության վերաբերյալ կարդացի, որ այն արվեստի մի տեսակ է, որը մարդու մոտ ինտիմ հարաբերություն ունենալու ցանկություն է առաջացնում, իսկ ցանկությունը յուրաքանչյուր մարդու մոտ առաջանում է անգիտակցականի մակարդակում և ոչ գիտակցականի» (Լորենս 1936:173):

Այնուամենայնիվ, մարդկանց մեծամասնությունը, ըստ Լորենսի, կարծում է, որ կենսահարաբերությունն ինչ-որ ցածր, կեղտոտ, անտանելի երևույթ է. «Մի խոսքով՝ մարդիկ դրան բացասաբար են վերաբերվում: Հարց է առաջանում, թե ինչու⁶: Որքան էլ ձևացնենք, թե բոլորովին անտարբեր ենք նման հարաբերություն ունենալու նկատմամբ, մեզնից շատերը դեմ չեն, որ իրենց մոտ նման ցանկություն առաջանա: Այդ ցանկությունը ջերմացնում է մեզ, ինչպես երբ ամպամած օրը արևն է ծագում ամպերի ետևից» (Լորենս 1936:173):

Հետագայում «Խուճապի վիճակ» (“The State of Funk”, 1929) էսսեում Լորենսը հստակեցնում է կենսահարաբերության վերաբերյալ իր տեսակետը. «Եթե զոյություն ունի մի բան, որ ես չեմ սիրում, դա էժանագին ու այլասերված կենսահարաբերությունն է: Եթե կա մի բան, որում ես այդքան վստահ եմ և կարող եմ պնդել, նուրբ զգացմունքների հիման վրա կենսահարաբերությունն է: Այն պետք է լինի ջերմ զգացմունքների, համակրանքի արդյունքում և երբեք չպետք է լինի պահի ազդեցության տակ կենդանական» (Լորենս 1971:370):

Այս տողերից կարելի է եզրակացնել՝ քանի որ կենսահարաբերությունը էական (vital), նուրբ, փոխադարձ համակրանքի վրա հիմնված զգացում է, ապա այն պետք է հարգել և ոչ թե դրան վերաբերվել մակերեսորեն: Մյուս կողմից՝ կենսահարաբերությունը, լինելով ֆիզիոլոգիական ցանկություն, ինքնաբուխ է և բնագրային: Այն մաքուր, գեղեցիկ և ազնիվ գործընթաց է, և պետք է այս փաստն ընդունել առանց վախենալու:

Ըստ Լորենսի՝ քրիստոնեական մշակույթներում կենսահարաբերությունը չի մեծարվում, անգամ չի խրախուսվում, որ այդ մասին խոսեն: Թույլատրվում է, որ միայն մտածեն այդ մասին: Այսպիսով, նա դեմ է հոգևոր սիրուն քրիստոնեական

կրոնում, քանի որ այն մերժում է մարմինը, փոխարենը խրախուսելու, որ մարդիկ ընդունեն «կենդանի կենսահարաբերությունը» (living sex). «Միակ խնդիրը, որ մենք ունենք, կենսահարաբերության մասին խոսելու կամ դրա մասին՝ որպես բնական գործընթաց մտածելու համարձակություն չունենալն է: Մենք անբարոյական (sexual villains) չենք և ոչ էլ սանձարձակ: Մենք պարզապես կենդանի էակներ ենք՝ կենդանի կենսահարաբերություն ունենալու ցանկությամբ: Հրաշալի կլիներ, եթե կենսահարաբերություն ունենալու այդ վախը մեզանում անհետանար» (Լորենս 1979:368):

«Խուճապի վիճակ» էսսեում Լորենսը շարունակում է գրել որ անգլիացիներն ապրում են վախի մեջ, վախ՝ ճանաչելու իրենց սեփական ցանկությունները, բնական պահանջմունքները. «Մեր քաղաքակրթությունը գրեթե ոչնչացրել է տղամարդու և կնոջ միջև բնական փոխհարաբերությունները: Եվ սա է, որ ցանկանում եմ վերականգնել մեր կյանքում: Սակայն համոզված եմ, որ մարդկանց մեծամասնությունն ունի նուրբ զգացմունքներ, որ երբևէ չի զգացել վախի, ճնշվածության պատճառով» (Լորենս 2004:221):

Ըրլ Բրևսթերը՝ Լորենսի բուդդիստ ընկերը, որը երկար ժամանակ է անցկացրել Լորենսի կողքին ապրելով, նրան շատ լավ էր ճանաչում և ցանկանում էր արդարացնել Լորենսին, որպեսզի հասարակությունը կենսահարաբերության վերաբերյալ արտահայտած նրա մտքերը սխալ չըմբռնի: Նա գրում է. «Նրանց համար, ովքեր չեն ճանաչում Լորենսին մոտիկից, և այն ընթերցողների համար, ովքեր Լորենսի մտքերը տարօրինակ են համարում, ես պետք է նշեմ հետևյալը. Նա պուրիտան է, եզրույթ, որը վերագրել էին Լորենսին իր կենդանության օրոք, և որն ինքը ընդունել է: Նրանք, ովքեր կարդալիս զգացել են, որ Լորենսը սանձարձակություն է խրախուսում, պետք է իմանան, թե որքան զգվանքով է նա վերաբերվել այդ երևույթին: Պարզ է, որ նա տարանջատում է մտավոր և ֆիզիկական կյանքը միմյանցից: Այսօր մեզանից շատերը մերժում կամ ճնշում են կենսահարաբերության ցանկությունը և չեն գիտակցում դրա կարևորությունը: Ես կարծում եմ, որ նա հնդկացի ցեղերի նման երկրպագում է «շակտին» (shakti)՝ կյանքը, տիեզերական ուժը, ամբողջականությունը: Նրա հետ իմ ապրած ուրախ, ազատ, կենսախինդ ժամանակահատվածում ես երբեք չեմ նկատել կամ լսել, որ Լորենսը գռեհիկ պատմություններ պատմի կամ գռեհիկ կատակներ անի բրոհադորդակցության վերաբերյալ: Նա իսկական պուրիտան է» (Բրևսթեր 1934:122):

Եզրակացություն

Այսպիսով՝ ամփոփելով վերոնշյալը կարող ենք ավելացնել, որ Դ.Հ. Լորենսի գաղափարները կենսահարաբերության վերաբերյալ սխալ են ընկալվել հասարակության և ընթերցողների կողմից, քանի որ նրանք առաջնորդվում էին բանականությամբ, իսկ Լորենսը բնական ազդակներն ազատ արձակելու կողմնակիցն էր: Ճիշտ է, որը Լորենսին շատ է հետաքրքրել կենսահարաբերությունը, սակայն որպես բժիշկ, ով ցանկանում էր բուժել: Նա ցանկանում էր, որպեսզի ընթերցողը հասկանա իր մտքերը՝ անկախ այն բանից՝ նրանք համամիտ են, թե՛ ոչ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Brewster, E. (1934) *D.H. Lawrence: Reminiscences and Correspondence*. London: Martin Secker.
2. Chaman, N. (1971) *D.H. Lawrence: An Eastern View*. New Delhi: Atma Ram & Sons.
3. Lawrence, D.H. (1979) *A Propose of Lady Chatterley's Lover. A Selection from Phoenix*. / Ed. by A.A.H. Inglis. Harmondsworth: Penguin.
4. Lawrence, D.H. (1936) *Pornography and Obscenity, The Posthumous Papers of D.H. Lawrence*. / Ed. by E.D. McDonald. London: William Heinemann Ltd.
5. Lawrence, D.H. (1968) *We Need One Another, Phoenix. The Posthumous Papers of D.H. Lawrence*. / Ed. by E.D. McDonald. New York: The Viking Press.
6. Lawrence, D.H. (2004) *Late Essays and Articles*. / Ed. by J.T. Boulton. Cambridge: CUP.
7. Lawrence, D.H. (1971) *The State of Funk, in D.H. Lawrence, A Selection from Phoenix*. / Ed. by A.A.H. Inglis. Harmondsworth: Penguin.
8. Lawrence, D.H. (1962) *The Collected Letters*. / Ed. by H.T. Moore. London: William Heinemann Ltd.
9. Lawrence, D.H. (1993) *The Complete Poems*. / Ed. by V.de Sola Pinto, etc. London: Penguin Books.
10. Marcus, S. (1964) *The Other Victorians: A Study of Sexuality and Pornography in Mid-Nineteenth-Century England*. New York: Basic Books.
11. Nirven, A. (1978) *D.H. Lawrence. The Novels*. Cambridge: CUP.
12. Watts, A. (1991) *Introduction. Nature, Man and Woman*. New York: Vintage Book Edition.

ԳՐԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐ

Լորենս, Դ.Հ. (2014) *Լեդի Չաթթրլիի Սիրեկանը*. / թրգմ.՝ Ա. Արսենյան. Երևան: Լուսակն:

D.H. Lawrence's Ideas on Intimate Relationships

The article is devoted to the perception of intimate relations by D.H. Lawrence, which were first expressed in his novel "Lady Chatterley's Lover", and later in his short prose. In scenes of intimacy Lawrence reveals subtle feelings of men and women. These relationships are a balance between man and woman in the universe, and people should not be ashamed of it.

Идеи Д.Г. Лоуренса об интимных отношениях

Статья посвящена пониманию Д.Г. Лоуренса интимных отношений, которые впервые были высказаны в романе "Любовник леди Чаттерли", а позже в его малой прозе. В сценах об интимных отношениях Лоуренс показывает тонкие чувства мужчины и женщины. Эти отношения являются балансом между мужчиной и женщиной во Вселенной, и люди не должны стыдиться их.